

**Հանրակրթութեան «Համաշխարհային պատմություն» առարկայի ուսումնառության
հայեցակարգ
(նախագիծ)**

1. Դասընթացի նպատակը.

«Համաշխարհային պատմություն» առարկան նպատակ ունի նպաստել սովորողների աշխարհայացքի ընդլայնմանը և արժեքային համակարգի ամբողջացմանը, ազգային ու համամարդկային արժեքներ կրող սոցիալապես ակտիվ, պատասխանատու և պահանջատեր քաղաքացու ձևավորմանը, նրանց հետագա կրթությանը, մասնագիտական կողմնորոշմանը կամ աշխատանքային գործունեությանը նախապատրաստելուն՝ հարափոփոխ աշխարհում համամարդկային արժեքներով, հայրենասիրության ու քաղաքացիական ոգով դաստիարակելու անհրաժեշտությամբ:

Հիմնական դպրոցի վերջնարդյունքներ

- Ծանոթանա մարդկության պատմության ընթացքում տեղ գտած փոփոխություններին
- Հասկանա դրանց իրականացման գործում մարդու և շրջակա միջավայրի փոխազդեցությունը
- Գնահատի գլոբալ փոխազդեցությունների համատեքստում ինստիտուցիոնալ կառույցների ձևավորումը
- Վերլուծի գլոբալ փոխազդեցությունների դաշտում ընթացող գործընթացները
- Ծանոթանա մշակութային բազմազանությանը
- Հասկանա անհատ, հասարակություն և միջավայրի փոխազդեցություն փոխկապվածությունը:
- Գործել որպես պատասխանատու քաղաքացի

Ավագ դպրոցի վերջնարդյունքներ

- Ճանաչի մարդկության պատմության կարևորագույն իրադարձությունների, երևույթների, գործընթացների, գաղափարների, հասկացությունների վերաբերյալ՝ ըստ հասարակական գործունեության բոլոր հիմնական ուղղությունների:
- Ջարգացնի պատմության ուսումնասիրության համար անհրաժեշտ կարողություններն ու հմտությունները, որոնք կկիրառվեն պատմությունից գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման նպատակով:
- Նպաստի անհրաժեշտ սոցիալական հմտություններով ու կարողություններով օժտված անձի ձևավորմանն ու կայացմանը, որը գիտակցում է հիմնարար հոգևոր արժեքների առաջնայնությունը և ձգտում սեփական կրթական մակարդակի բարձրացմանը:
- Ջարգացնի պատմական ու տրամաբանական մտածողությունը, պատճառահետևանքային կապեր գտնի պատմական գործընթացներում, պատմական ու հասարակական տարբեր իրադարձությունների, երևույթների միջև, հասկանա ու մեկնաբանի տարբեր երկրների ու ժողովուրդների զարգացման ընթացքը, բնույթը, օրինաչափություններն ու առանձնահատկությունները, դրանք պայմանավորող գործոնները:
- Գնահատի և արժևորի համաշխարհային քաղաքակրթական ձեռքբերումները, հայ ժողովրդի ներդրումը համաշխարհային քաղաքակրթության անդաստանում:

2. Առարկայի, դասընթացի ընդհանուր բնութագիրը

ա) դասընթացի արդիականությունը.

Պատմությունը հիշողությունն է անհատի, ազգի և ողջ մարդկության: Ինչպես յուրաքանչյուր անհատի պատմություն նրա անհատականության, այնպես էլ համայն մարդկության պատմությունը ժամանակակից ձեռքբերումների մարմնավարումն է: Համաշխարհային պատմության ուսումնասիրումը հնարավորություն է տալիս՝ տեսնելու մարդկային հասարակության զարգացման ուղին՝ քաղաքակրթությունների ձևավորումից մինչև գլոբալ փոխազդեցություններ, նախապատմական ժամանակաշրջանից մինչև հետարդյունաբերական շրջանի գիտատեխնիկական արդի նվաճումներ: Հնարավորություն է տալիս՝ հասկանալու և արժևորելու մշտապես փոփոխվող աշխարհի հասարակական, քաղաքական, տնտեսական և մշակութային գործընթացները և դրանցում դերակատարում ունեցած անհատներին: Այս ամենի արդյունքում անձը մարդուց վերածվում է անհատի և գիտակցում է իր տեղը սերունդների հերթափոխում՝ խորապես ըմբռնելով իր գոյության իմաստը՝ որպես պատասխանատու քաղաքացի: Սույնով պայմանավորված Համաշխարհային պատմություն առարկան հանրակրթության անքաքստելի մասն է և ունի անցյալի ու ներկայի պատմական, հասարակական, քաղաքական, տնտեսական, մշակութային գործընթացները կապող կարևորագույն դերակատարում:

բ) ծրագրի առանձնահատկությունները, հիմնական գաղափարը, որի վրա հիմնված են առարկայի (դասընթացի) մոտեցումները, սկզբունքները, ծրագրի փուլերը, դրանց հիմնավորումը և փոխհարաբերությունները.

Առարկայի առանձնահատկությունը սովորողի մոտ պատմական, շրջահայաց մտածողության ձևավորումն ու զարգացումն է, որը հնարավորություն կտա վերջինիս ըմբռնել մարդկության պատմության ընթացքում տեղ գտած փոփոխությունները, հասկանալ դրանց իրականացման գործում մարդու և շրջակա միջավայրի փոխազդեցությունը, գնահատել պատմական գործընթացների համատեքստում ինստիտուցիոնալ կառույցների ձևավորումը, վերլուծել գլոբալ փոխազդեցությունների դաշտում առկա գործընթացները, ծանոթանալ մշակութային միջավայրին և հասկանալ անհատ, հասարակություն և միջավայրի փոխազդեցություն փոխկապվածությունը:

Համաշխարհային պատմություն առարկայի մոտեցումները, սկզբունքներն ու ծրագրային փուլերը հիմնված են *Քաղաքակրթություն, Փոփոխություն, Գլոբալ փոխազդեցություն, Համակարգ* հիմնական գաղափարների վրա, որոնք փոխկապվածության սկզբունքով քննության են առնում Համաշխարհային պատմության ողջ շրջափուլը՝ հնագույն շրջանից մինչև մեր օրերը:

գ) սովորողների հետ աշխատանքի հիմնական մեթոդների և տեխնոլոգիաների, գնահատման առանձնահատկությունների, եղանակների և ձևերի համառոտ նկարագրությունը:

Ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկում ենք կիրառել այնպիսի տեխնոլոգիաներ և մեթոդներ, որոնք կապահովեն յուրաքանչյուր սովորողի ակտիվ ընդգրկվածությունը ուսուցման գործընթացում:

Դասավանդման մոտեցումներ.

Համաշխարհային պատմություն առարկայի ուսումնառության հիմքում դրված է հետևյալը.

1. Հասկացությունների վրա հիմնված ուսումնառություն (հասկացությունը առարկայի հիմքում ընկած մեծ գաղափարներն են, որոնք ժամանակ, տարածություն և մշակութային սահմանափակումներ չունեն)
2. Հմտություններ.
 - . Սանի մոտ ուսունական հմտությունների զարգացում. Քննադատական վերլուծական, հատազոտական, ստեղծագործական մտածողություն
 - . Հաղորդակցական-համագործակցային հմտությունների զարգացում
 - . Ինքնակազմակերպման հմտություն
3. Ինքնուրույն հետազոտության վրա հիմնված ուսումնառություն
4. Տարբերակված ուսումնառություն
5. Իրական կյանքին առնչվող և խնդրահարույց հարցերի հետազոտման վրա հիմնված ուսումնառություն
Ստուգումն ու գնահատումը նախատեսվում է իրականացնել տարբեր բնույթի և տիպի առաջադրանքներով: Առարկայի ուսումնառության համար կարևորում ենք.

1. Գիտելիքի
2. Հետազոտական մոտեցումների
3. Հաղորդակցական հմտությունների
4. Մտածողության ձևերի գնահատումը

Բովանդակության կառուցման հիմնական սկզբունքները.

Բովանդակությունը համապատասխանում է

- Համաշխարհային պատմական, հասարակական, քաղաքական, տնտեսական, մշակութային գործընթացներին
- մարդկության պատմության ընթացքում տեղ գտած փոփոխություններին,
- Մարդկության պատմության ընթացքում տեղ գտած գիտության, տեխնոլոգիայի և մշակույթի նվաճումներին
- Գլոբալ փոխազդեցությունների նկատմամբ սովորողների վերաբերմունքին
- Քաղաքակրթական և Մշակութային գործընթացների ներկայացմանը սովորողի մոտ արժեքային համակարգի ձևավորման սոցիալական նպատակներին
- Պատմական մտածելակերպի ձևավորմամբ՝ սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացման նպատակներին
- Պատմական տեղեկատվություն շարունակականության պահանջներին՝ նախկինում ուսումնասիրված նյութից մինչև ընթացիկ և դրան հաջորդող նյութը ակնհայտվող կապին
- Տարբեր առարկաների (Հայոց պատմություն, աշխարհագրություն, հայոց լեզու և գրականություն, օտար լեզուներ, համաշխարհային գրականություն, հասարակագիտություն և այլն) հետ միջառարկայան կապերին
- ուսումնասիրվող երևույթների (Անհատ, հասարակություն, նորարություն, հեղափոխություն, պետություն, կոնֆլիկտ, մշակույթ) միջև գոյություն ունեցող բնական կապերին:

Ուսումնական ծրագրով սահմանված կրթության բովանդակության կոնկրետացումը տեղի է ունենում դասագրքերում, ուսումնական ձեռնարկներում և ուղեցույցներում:

**«Համաշխարհային պատմություն» առարկայի օրինակելի ծրագիր
7-րդ դասարան**

Թեմա 1
Անցյալի ուսումնասիրման անհրաժեշտությունը: Պատմություն հասկացությունը: Պատմության ուսումնասիրության առարկան, խնդիրները, նպատակը, գործառույթները, եղանակները:
Նպատակ
Սանը կուսումնասիրի պատմություն առարկան, խնդիրները, գործառույթներն ու ուսումնասիրման եղանակները:
Հետազոտության հարցը
Ի՞նչ է պատմությունը: Ինչո՞ւ և ինչպե՞ս ենք ուսումնասիրում այն: Ի՞նչ է քաղաքակրթությունը: Արդյոք պատմության ուսումնասիրման բոլոր աղբյուրները հավաստի են:
Վերջնարդյունք
Սահմանի «պատմություն» հասկացությունը, բացատրել դրա ուսումնասիրության առարկան, խնդիրները, նպատակը, գործառույթները, եղանակները: Սահմանի «քաղաքակրթություն», «ինքնություն», «ազգային ինքնություն», «պատմական հիշողություն», «պատմական ժառանգություն» եզրույթները: Ներկայացնի պատմության պարբերացման փուլերը Վերլուծի հասարակությունների զարգացման ձևերն ու անհրաժեշտությունը:
Թեմայի բովանդակություն
«Պատմություն» հասկացությունը: Պատմության ուսումնասիրության առարկան, խնդիրները, նպատակը, գործառույթները և եղանակները Պատմական մտածողության հասկացությունները. պատմական նշանակություն, պատմական վկայություն և մեկնաբանություն, շարունակականություն և փոփոխություն, պատճառ և հետևանք, պատմական հեռանկար, պատմության էթիկական դիտանկյունը

«Ինքնություն», «ազգային ինքնություն», «պատմական հիշողություն», «պատմական ժառանգություն» հասկացությունները Պատմության պարբերացումը. նպատակը, սկզբունքները: Համաշխարհային պատմության պարբերացման մոդելները: Քաղաքակրթություն հասկացությունը. բնութագրիչները (միջավայր, հասարակական քաղաքական, տնտեսական, մշակութային համակարգեր): Հասարակությունների ոչ համաչափ զարգացման տեսությունը: Հասարակությունների զարգացման պարուրաձև շղթայի օրինաչափությունը: Ինքնաբավ հասարակություններ:		
Ուսումնական գործունեություն		Ընդհանրական խաչվող հասկացություններ
սկզբնաղյուրների հետ աշխատանք, դեպքի ուսումնասիրում 3D մոդելով միջավայրի ստեղծում		Օրինաչափություն Պատճառները, հետևանքները, ընդհանրությունները, առանձնահատկությունները դիտարկել որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ: Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ Դիտարկել պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, ընկերային ու առտնին կյանքն ու սովորույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների միջև փոխհարաբերությունները, անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:
Միջառարկայական կապերը թեմայում		
Աշխարհագրություն-քաղաքակրթությունների զարգացման աշխարհագրական միաջավայրի ազդեցությունը Լեզու, գրականություն- պատմական տեքստերի ընթերցում Մաթեմատիկա-հաշվարկներ Արվեստ-պատմության արտացոլանքը		
Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ		
Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46		

Հին Հունաստան	
Նպատակ	
Մանր կուսումնասիրի Հին հունական քաղաքակրթության ձևավորման և զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները, նորարարությունները և դրանց ունեցած դերն ու ազդեցությանը ժամանակակից աշխարհի վրա:	
Հետազոտության հարցը	
Ո՞րն էր հունական քաղաքակրթության առանձնահատկությունը: Որն է հունական քաղաքակրթությունն ունեցած ներդրումը համաշխարհային քաղաքակրթության մեջ: Արդյոք հնարավոր է պատկերացնել եվրոպական քաղաքակրթության զարգացումը առանց հունական քաղաքակրթություն:	
Երջնարդյունք	
Ուսումնասիրի Հին Հունական քաղաքակրթությունը: Բացատրի դրանց դերակատարումը համաշխարհային պատմության մեջ: Ճանաչի քարտեզի վրա Հին Հունական քաղաքակրթության ձևավորման տարածական ընդգրկումն ու պատմաաշխարհագրական սահմանները: Հետազոտի Հին հունական քաղաքակրթության հասարակական, քաղաքական և տնտեսական կառուցվածքը, առանձնահատկությունները ու գնահատի դրանց ազդեցությունը համաշխարհային արդի գործընթացների վրա: Աղբյուրագիտական հենքով վերլուծի առկա տեղեկույթը, համադրի փաստերն ու իրադարձությունները և անի եզրակացություններ:	
Խմայի բովանդակություն	
Հունական քաղաքակրթության սկիզբը Արխաիկ դարաշրջանի Հունաստանը (Ք.ա. VIII-VI դարեր) Դասական դարաշրջանի հունական պոլիսը Դասական դարաշրջանի Հունաստանի հասարակական և մշակութային կյանքը Ալեքսանդր Մակեդոնացի. Համաշխարհայնացման առաջին փորձերը Հելլենիստական աշխարհ. Մշակութային ժառանգություն	
Ուսումնական գործունեություն	Ընդհանրական խաչվող հասկացություններ
սկզբնաղբյուրների հետ աշխատանք դեպքի ուսումնասիրում. հունական պոլիս և արդի աշխարհ սահիկաշարի պատրաստում բանավեճ,	Անհատներ և հարաբերություններ Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: Անհատական և մշակութային արտահայտում Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները հանրահռչակելու,

	պահպանելու, զարգացնելու և փոխանցելու անհրաժեշտությունը:
Միջառարկայական կապերը թեմայում	
Աշխարհագրություն – քարտեզի ճանաչում Հայոց լեզու և գրականություն – հունական ավանդույթների, տեքստերի ընթերցում Արվեստ – հունական արվեստի առանձնահատկությունների ուսումնասիրում, նկարչություն, երաժշտություն, պար Մաթեմատիկա-ձեռքբերումները, հաշվարկները, չաձումները	
Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ	
Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46	

Թեմա 3
Հին Հռոմ
Նպատակ
Մանր կուսումնասիրի Հին հռոմեական քաղաքակրթության ձևավորման և զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները, ականավոր գործիչներին, նորարարությունները և դրանց ունեցած դերն ու ազդեցությանը ժամանակակից աշխարհի վրա:
Երջնարդյունք
- Ուսումնասիրի Հին հռոմեական քաղաքակրթությունը: - Բացատրի դրանց դերակատարումը համաշխարհային պատմության մեջ: - Ճանաչի քարտեզի վրա Հին Հռոմեական քաղաքակրթության ձևավորման տարածական ընդգրկումն ու պատմաաշխարհագրական սահմանները: - Հետազոտի Հին Հռոմեական քաղաքակրթության հասարակական, քաղաքական և տնտեսական կառուցվածքը, առանձնահատկությունները ու գնահատի դրանց աղեցությունը համաշխարհային արդի գործընթացների վրա: - Աղբյուրագիտական հենքով վերլուծի առկա տեղեկությոը, համադրի փաստերն ու իրադարձությունները և անի եզրակացություններ:
Թեմայի բովանդակություն
- Հռոմը Տիբր գետի պարզև - Հռոմեական երկպառակտված հասարակությունը - Հանրապետության գաղափարի ձևավորումը - Անցումը հանրապետությունից պրինցիպատի - Հռոմեական տեության կազմավորումը

6. Հոռմեական կայսրության ծաղկումն ու անկումը 7. Հին Հռոմի հասարակական և մշակութային կյանքը 8. Թեմայի ամփոփում	
Ուսումնական գործունեություն	Ընդհանրական խաչվող հասկացություններ
հիմնախնդիրների հետազոտում աղբյուրի հետ աշխատանք եռաչափ քարտեզի ստեղծում	Համակարգ (Պետություն) Դիտարկել պետությունը որպես հասարակության միասնական քաղաքական համակարգ: Անհատներ և հարաբերություններ Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում:
Միջառարկայական կապերը թեմայում	
Աշխարհագրություն-քարտեզի կիրառում, աշխարհագրական միջավայրի առանձնահատկությունների ուսումնասիրում Հասարակագիտություն –պատական համակարգ Լեզու, գրականություն- տեքստերի ընթերցում և վերլուծում Մաթեմատիկա –հաշվարկների կատարում, խնդիրների կազմում Արվեստ - հռոմեական արվեստի ուսումնասիրում	
Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ	
Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46	

Թեմա 4
<i>Քաղաքակրթությունների զարգացման ուղին Արևմուտքում և Արևելքում</i>
Նպատակ
Սանը կուսումնասիրի միջնադարյան քաղաքակրթությունների ձևավորման և զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները Արևմուտքում, Արևելքում և դրանց ունեցած ներդրումը արդի աշխարհի ձևավորման վրա:
Վերջնարդյունք
- Ուսումնասիրի միջնադարյան արևմտյան ու արևելյան քաղաքակրթությունները: - Բացատրի միջնադարյան արևմտյան ու արևելյան քաղաքակրթությունների դերակատարումը համաշխարհային պատմության մեջ: - Ճանաչի քարտեզի վրա միջնադարյան արևմտյան ու արևելյան քաղաքակրթությունների աշխարհագրական ընդգրկվածությունը:

• Հետազոտի միջնադարյան արևմտյան ու արևելյան պետությունները և դրանց հասարակական, քաղաքական և տնտեսական կառուցվածքը, առանձնահատկությունները ու գնահատի դրանց աղեցությունը համաշխարհային արդի գործընթացների վրա: • Աղբյուրագիտական հենքով վերլուծի առկա տեղեկությոը, համադրի փաստերն ու իրադարձությունները և անի եզրակացություններ:	
Թեմայի բովանդակություն	
1. Հռոմեական կայսրության կործանումը և Եվրոպայի ծնունդը 2. Բարբարոսական պետությունների ձևավորումը վաղ միջնադարում 3. Հռոմեական կայսրության ուրվականը Եվրոպայում 4. Ծովահենների քաղաքակրթությունը. վիկինգներ 5. Արևելյան Հռոմեական կայսրությունը V-XV դարերում 6. Քաղաքակրթական նոր կենտրոնի ձևավորումը միջնադարում. Կիևյան Ռուսիա 7. Ճգնաժամի հաղթահարման ուղին Եվրոպայում. Խաչակրաց արշավանքները 8. Ինքնության ձևավորումը Եվրոպայում. հարյուրամյա պատերազմ 9. Նոր տեսակի պետության առաջացումը Արևմուտքում 10. Չինաստան 11. Հնդկաստան 12. Ճապոնյան 13. Քոչվորական քաղաքակրթություններ. Սելջուկ-թուրքեր, մոնղոլներ 14. Թեմայի ամփոփում	
Ուսումնական գործունեություն	Ընդհանրական խաչվող հասկացություններ
սկզբնաղբյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն հիմնախնդիրների հետազոտում	Համակարգ (Պետություն) Դիտարկել պետությունը որպես հասարակության միասնական քաղաքական համակարգ: Օրինաչափություն Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները դիտարկել որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ:
Միջառարկայական կապերը թեմայում	
Աշխարհագրություն – քաղաքական ու ֆիզիկական քարտեզ Հասարակագիտություն – քաղաքական համակարգեր Գրականություն – տեքստերի ուսումնասիրում ու վերլուծում Մաթեմատիկա – հաշվարկների կատարում և խնդիրների կազմում ՆԶՊ – բանականների կառուցվածքի, զենքի տեսակների ուսումնասիրում Արվեստ - քաղաքակրթությունների տարբերությունների արտացոլանքը արվեստում	
Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնադրյունքների հետ	

Թեմա 5

Միջնադարյան հասարակության տնտեսական համակարգերը

Նպատակ

Սանը կուսումնասիրի միջնադարյան հասարակությունների տնտեսական համակարգերը:

Վերջնադրույնք

- Ուսումնասիրի միջնադարյան հասարակությունների տնտեսական համակարգերի առանձնահատկությունները:
- Վերլուծի այն գործոնները, որոնք նպաստեցին տարբեր քաղաքակրթությունների տնտեսական առանձնահատկությունների ձևավորմանը: (օրինակ հյուսիսում նավարկելի գետերի և ծովերի առկայությունը նպաստեց վիկինգներին կողմից ծովահենությամբ զբաղվելուն, Իտալիայի աշխարհագրական բարենպաստ դիրքը նրան դարձրեց առևտրական կենտրոն Միջերկրածովում):
- Մեկնաբանի այն գործոնները, որոնք նպաստեցին մի շարք հասարակությունների արագ տնտեսական զարգացմանը և խթանեցին քաղաքակրթության գերիշխող դիրքի ձեռք բերմանը: (օրինակ պետականության թուլացումը Բյուզանդիայում օգնեց քոչվորներին տարածել իրենց ռազմաֆեոդալական տնտեսական համակարգը...), պետության բացակայությունը Մերձավոր Արևելքում օգնեց խաչակիրներին արագորեն տնտեսական գերիշխանություն ձեռք բերելուն:
- Գիտակցի տնտեսական նորարարությունների դերակատարումը հասարակությունների զարգացման մեջ՝ հույներ՝ ձիթապտղի քաղաքակրթություն, չինացիներ՝ մետաքսի քաղաքակրթություն..., իտալիա մանուֆակտուրա:
- Աղբյուրագիտական հենքով վերլուծութի առկա տեղեկությոը, համադրի փաստերն ու իրադարձությունները ևս անի եզրակացություններ

Թեմայի բովանդակություն

1. Տնտեսական ձևափոխումները: Ստրկատիրությունից մինչև մանուֆակտուրա. Ընդհանարական ակնարկ, ինչ է տնտեսությունը և ինչու է այն համարվում հասարակության զարգացման գրավական
2. Տնտեսական համակարգերը Հին աշխարհի կայսրություններում՝ գյուղատնտեսություն, առևտուր, Մետաքսի և Արքայական ճանապարհներ
3. Հասարակական սեփականության գաղափարը Հին Հունաստանում և Հռոմում՝ հասարակական հող ,ստրկության վերացում Սոլոն...,
4. Տնտեսական փոփխությունները. անցում ստրկությունից դեպի ավատատաիրությնա
5. Ծովահենությունը տնտեսության հիմք՝ Սկանդինավյան երկրներ
6. Ինքնաբավ տնտեսությունը Չինաստանում
7. Տնտեսական նորարար գաղափարների ծնունդը Իտալիայում

8.Տնտեսական նորարարությունները կերպավորվեցին միջնադարյան հասարակությունը
9. Թեմայի ամփոփում

Ուսումնական գործունեություն	Ընդհանրական խաչվող հասկացություններ
Հետազոտական աշխատանք Տնտեսական համակարգերի մոդելավորում աղյուսակների, գծակարգերի, գծապատկերների կազմում	Համակարգ Դիտարկել տնտեսական համակարգերի և հասարակությունների փոխազդեցությունները Գիտատեխնիկական նորարարություն Ինչպե՞ս ենք գնահատում այն աշխարհը, որտեղ ապրում ենք: Մովորողները ուսումնասիրում են բնությունը, դրանց օրենքները, փոխազդեցությունը մարդկանց և բնության միջև, գիտական և տեխնոլոգիական նվաճումների ազդեցությունը համայնքի և շրջակա միջավայրերի վրա, շրջակա միջավայրի ազդեցությունը մարդկային գործունեության վրա, շրջակա միջավայրի հարմարեցումը մարդու կարիքներին:
Միջառարկայական կապերը թեմայում	
Աշխարհագրություն – քարտեզի ուսումնասիրում ու օգտագործում, աշխարհագրական միջավայրի ուսումնասիրում Հասարակագիտություն –քաղաքական ու տնտեսական համակարգերի ուսումնասիրում ու միմյանց վրա ազդեցության մեկնաբանում Հայոց լեզու, գրականություն – տեքստերի ընթերցում ու վերլուծություն Մաթեմատիկա –հաշվարկներ, խնդիրների կազմում Արվեստ -արվեստի ճյուղերի առանձնահատկությունները	
Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնադրյունքների հետ	
Հ 16, Հ 17, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 45, Հ 46	

Համաշխարհային պատմություն 8-րդ դասարան

Թեմա 1
<i>Քաղաքակրթությունների մուտքը նոր ժամանակներ</i>
Նպատակ
Մանր կուսումնասիրի համաշխարհային պատմության Նոր դարերի Պատմական զարգացումը, հասարակական, քաղաքական, տնտեսական և աշխարհաքաղաքական գործընթացներով պայմանավորված փոփոխությունները:
Վերջնարդյունք
• Ճանաչի համաշխարհային պատմության խոշոր շրջափուլի՝ Նոր դարերի պատմական զարգացման կարևոր արդյունքները, բացատրի դրա դերակատարումը մարդկության զարգացման գործընթացում • Քարտեզի վրա ցույց տա Նոր դարերում հասարակական, քաղաքական, տնտեսական և աշխարհաքաղաքական գործընթացներով պայմանավորված փոփոխությունները: • Ճանաչի Նոր դարերի աշխարհի պետությունները, դրանց հասարակական, քաղաքական և տնտեսական կառուցվածքը, թվարկի դրանց առանձնահատկությունները: • Նկարագրի Նոր դարերի հասարակական քաղաքական և տնտեսական գործընթացները, մեկնաբանի դրանց նորարարական դերակատարումն ու ադեցությունը համաշխարհային արդի գործընթացների վրա: • Ճանաչի Նորի դարերի աշխարհի մշակույթները, համադրի դրանց առանձնահատկությունները, Ցույց տա համաշխարհային ժամանակակից մշակույթի վրա դրանց ազդեցությունը: • Ճանաչի Նոր դարերում հասարակական, քաղաքական և մշակութային կարևոր դերակատարում ունեցող անհատներին, գնահատի նրանց գործունեությունը և դերակատարումը • Օրինակներ բերի Նոր դարերում համաշխարհային պատմության մեջ տեղ գտած հակամարտություններից և հեղափոխական գործընթացներից, գնահատի դրանց ազդեցությունը հետագա և արդի պատմական գործընթացների վրա: • Մեկնաբանի պատմական կարևոր եզրույթներն ու հասկացությունները, և կիրառի դրանք ըստ անհրաժեշտության և նշանակության: • Աղբյուրագիտական հենքով վերլուծի առկա տեղեկությունը, համադրի փաստերն ու իրադարձությունները և անի եզրակացություններ
Թեմայի բովանդակություն
1. Համաշխարհային քաղաքակրթությունների համեմատական վերլուծության նկարագիրը նոր դարերի շեմին 2. Երկու կիսագնդերի հանդիպումը. աշխարհագրական մեծ հայտնագործությունները 3. Նոր գաղափարները փոխում են աշխարհը. Վերածնունդ, Ռեֆորմացիա, Գիտական հեղափոխություն 4. Լուսավորության դարաշրջանը 5. Թեմայի ամփոփում

Ուսումնական գործունեություն	Ընդհանրական խաչվող հասկացություններ
սկզբնաղյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն հիմնախնդիրների հետազոտում (անհատական, զույգենով կամ խմբային) սահիկաշարերի պատրաստում ուրվագծային քարտեզների հետ աշխատանք երևակայական ճանապարհորդություն տվյալ ժամանակաշրջանով	Օրինաչափություն Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները դիտարկել որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ: Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ Դիտարկել պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, ընկերային ու առտնին կյանքն ու սովորույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների միջև փոխհարաբերությունները, անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:
Միջառարկայական կապերը թեմայում	
Աշխարհագրություն – քարտեզ, աշխարհագրական միջավայրի ուսումնասիրում Գրականություն – տեքստերի ընթերցում, վերլուծում ՆԶՊ- մարտավարության փոփոխություն, բանակի կառուցվածքի, զենքի ձևերի ուսումնասիրում Արվեստ -փոփոխություններ ու մեկնաբանությունները արվեստում	
Կապը Հանրակրթության չափորոշի միջին դպրոցի վերջնաբաժնի հետ	
Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46	

Թեմա 2
Արդյունաբերական հասարակությունը առաջ է անցնում քաղաքակրթական մրցավզում
Նպատակ
Սանը կուսումնասիրի Նոր դարերի հասարակական քաղաքական և տնտեսական գործընթացները, քաղաքական և մշակութային կարևոր դերակատարում ունեցած անհատների գործունեությունը:
Վերջնաբաժնի
Նկարագրի Նոր դարերի հասարակական քաղաքական և տնտեսական գործընթացները, մեկնաբանի դրանց նորարարական դերակատարումն ու աղեցությունը համաշխարհային արդի գործընթացների վրա:

- Ճանաչի Նոր դարերում հասարակական, քաղաքական և մշակութային կարևոր դերակատարում ունեցող անհատներին, գնահատի նրանց գործունեությունը և դերակատարումը
- Օրինակներ բերի Նոր դարերում համաշխարհային պատմության մեջ տեղ գտած հակամարտություններից և հեղափոխական գործընթացներից, գնահատի դրանց ազդեցությունը հետագա և արդի պատմական գործընթացների վրա:
- Մեկնաբանի պատմական կարևոր եզրույթներն ու հասկացությունները, և կիրառի դրանք ըստ անհրաժեշտության և նշանակության:
- Աղբյուրագիտական հենքով վերլուծի առկա տեղեկությոը, համադրի փաստերն ու իրադարձությունները և անի եզրակացություններ

Թեմայի բովանդակություն

Արդյունաբերական հասարակության առաջին երկու շրջափուլը (XVII-XX դարի առաջին կես)

1. Արդյունաբերական հասարակության գաղափարախոսությունը
2. Արմատական տեղաշարժեր տնտեսության մեջ, Արդյունաբերական զարգացման արդյունքները

Ուսումնական գործունեություն	Ընդհանրական խաչվող հասկացություններ
սկզբնաղյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն հիմնախնդիրների հետազոտում (անհատական, զույգեևով կամ խմբային) Հետազոտական աշխատանք Բանավեճ Էսսե	Օրինաչափություն Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները դիտարկել որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ: Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայուն զարգացում Դիտարկել հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա:

Միջառարկայական կապերը թեմայում

Հասարակագիտություն-գաղափարախոսությունների ուսումնասիրում

Գրականություն – տեքստերի հետազոտում

Արվեստ - նոր ճյուղերի ու նոր մոտեցումների ի հայտ գալու հետազոտում

Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ

Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46

Թեմա 3

Հեղափոխությունները հասարակությունների զարգացման շարժիչ ուժ. Հաղթանակ և պարտություն

Նպատակ

Սանը կուսումնասիրի պետությունների հասարակական, քաղաքական և տնտեսական կառուցվածքը, ինչպես նաև համաշխարհային պատմության Նոր դարերում տեղ գտած հակամարտությունները և հեղափոխական գործընթացները:

Վերջնարդյունք

- Քարտեզի վրա ցույց տա Նոր դարերում հասարակական, քաղաքական, տնտեսական և աշխարհաքաղաքական գործընթացներով պայմանավորված փոփոխությունները:
- Նկարագրի Նոր դարերի հասարակական քաղաքական և տնտեսական գործընթացները, մեկնաբանի դրանց նորարարական դերակատարումն ու աղեցությունը համաշխարհային արդի գործընթացների վրա:
- Ճանաչի Նորի դարերի աշխարհի մշակույթները, համադրի դրանց առանձնահատկությունները, Ցույց տա համաշխարհային ժամանակակից մշակույթի վրա դրանց ազդեցությունը:
- Ճանաչի Նոր դարերում հասարակական, քաղաքական և մշակութային կարևոր դերակատարում ունեցող անհատներին, գնահատի նրանց գործունեությունը և դերակատարումը
- Օրինակներ բերի Նոր դարերում համաշխարհային պատմության մեջ տեղ գտած հակամարտություններից և հեղափոխական գործընթացներից, գնահատի դրանց ազդեցությունը հետագա և արդի պատմական գործընթացների վրա:
- Մեկնաբանի պատմական կարևոր եզրույթներն ու հասկացությունները, և կիրառի դրանք ըստ անհրաժեշտության և նշանակության:
- Աղբյուրագիտական հենքով վերլուծի առկա տեղեկույթը, համադրի փաստերն ու իրադարձությունները և անի եզրակացություններ

Թեմայի բովանդակություն

1. Հասարակության վերակառուցման հեղափոխական ուղին
2. Ֆրանսիական մեծ հեղափոխությունը
3. Նապոլեոնի դարաշրջանը (1799–1815)
4. Եվրոպա 1815–1850–ական թվականներին (հետադիմություն, փոխհամաձայնություն)
5. Հեղափոխությունները եվրոպայում 1830–1840–ական թվականներին
6. Արևելքի ավանդական հասարակություններն ու արդիականացման փորձերը (Օսմանյան կայսրություն , Իրան, Հնդկաստան և Չինաստան)
7. Փոփոխություններ տնտեսության մեջ և սոցիալական կյանքում
8. Քաղաքական ու սոցիալական կյանքի զարգացումը Եվրոպայում և ԱՄՆ-ում
9. Գերմանիայի եվ Իտալիայի վերամիավորումները

10. Թեմայի ամփոփում	
Ուսումնական գործունեություն	Ընդհանրական խաչվող հասկացություններ
Սկզբնաղյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն: նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքագրում, գրավոր և բանավոր հաղորդումների պատրաստում թեմային աշխատանքների կատարում	Անհատներ և հարաբերություններ Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: Անհատական և մշակութային արտահայտում Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը:
Միջառարկայական կապերը թեմայում	
Հայոց պատմություն – գաղափարական փոփոխություններ, ազատագրական պայքար Աշխարհագրություն - միջավայրի ուսումնասիրում, քարտեզ Հասարակագիտություն – քաղաքական, տնտեսական ու գաղափարական համակարգեր Գրականություն – համապատասխան տեքստի մեկնաբանություն Արվեստ - ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ	
Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ	
Հ 16, Հ 17, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 45, Հ 46	

Թեմա 4
Քաղաքական գաղափարախոսությունները
Նպատակ
Մանր կուսումնասիրի Նոր դարերի քաղաքականական գաղափարախոսությունները, հասարակական, քաղաքական, մշակութային շարժումները և կարևոր դերակատարում ունեցած անհատների գործունեությունը
Վերջնարդյունք
• Քարտեզի վրա ցույց տա Նոր դարերում հասարակական, քաղաքական, տնտեսական և աշխարհաքաղաքական գործընթացներով պայմանավորված փոփոխությունները: • Ճանաչի Նոր դարերի աշխարհի պետությունները, դրանց հասարակական, քաղաքական և տնտեսական կառուցվածքը, թվարկի դրանց առանձնահատկությունները: • Նկարագրի Նոր դարերի հասարակական քաղաքական և տնտեսական գործընթացները,

մեկնաբանի դրանց նորարարական դերակատարումն ու ադեցությունը համաշխարհային արդի գործընթացների վրա: • Ճանաչի Նոր դարերում հասարակական, քաղաքական և մշակութային կարևոր դերակատարում ունեցող անհատներին, գնահատի նրանց գործունեությունը և դերակատարումը • Օրինակներ բերի Նոր դարերում համաշխարհային պատմության մեջ տեղ գտած հակամարտություններից և հեղափոխական գործընթացներից, գնահատի դրանց ազդեցությունը հետագա և արդի պատմական գործընթացների վրա: • Մեկնաբանի պատմական կարևոր եզրույթներն ու հասկացությունները, և կիրառի դրանք ըստ անհրաժեշտության և նշանակության: • Աղբյուրագիտական հենքով վերլուծի առկա տեղեկույթը, համադրի փաստերն ու իրադարձությունները և անի եզրակացություններ	
Թեմայի բովանդակություն	
1. Սոցիալիզմ 2. Մարքսիզմ 3. Կոմունիզմ. 4. Լիբերալիզմ. Ամերիկյան հասարակություն 5. Սոցիալ-դարվինիզմ. Պատերազմ 6. Ֆեմինիզմ, գենդեր 7. Կրթության և գիտության դերը հասարակության փոփոխության գործում (xvii դար – xx դարի առաջին կես)	
Ուսումնական գործունեություն	Ընդհանրական խաչվող հասկացություններ
նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքագրում, գրավոր և բանավոր հաղորդումների պատրաստում թեստային աշխատանքների կատարում Սկզբնաղբյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն: Զանգվածային լրատվամիջոցներից , համացանցից ստացված տեղեկատվության վերլուծություն: Ֆիլմերի դիտում և քննարկում քննարկումներ	Օրինաչափություն Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները դիտարկել որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ: Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայուն զարգացում Դիտարկել հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա:
Միջառարկայական կապերը թեմայում	
Գրականություն – համապատասխան տեքստերի ընթերցում և մեկնաբանություն Արվեստ - կերպարվեստ, երաժշտություն	
Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ	

Համաշխարհային պատմություն 9-րդ դասարան

Թեմա 1

Նորարարությունը հանգեցրեց աշխարհի անհամաչափ զարգացմանը

Նպատակ

Մանր կուսումնասիրի արդյունաբերական հասարակության երկրորդ շրջափուլում տեղ գտած հասարակական, քաղաքական, տնտեսական և աշխարհաքաղաքական գործընթացները, դրանցում կարևոր դերակատարում ունեցող անհատներին:

Վերջնարդյունք

- Քարտեզի վրա ցույց տա Նոր դարերում հասարակական, քաղաքական, տնտեսական և աշխարհաքաղաքական գործընթացներով պայմանավորված փոփոխությունները:
- Ճանաչի Նոր դարերի աշխարհի պետությունները, դրանց հասարակական, քաղաքական և տնտեսական կառուցվածքը, թվարկի դրանց առանձնահատկությունները:
- Նկարագրի Նոր դարերի հասարակական քաղաքական և տնտեսական գործընթացները, մեկնաբանի դրանց նորարարական դերակատարումն ու աղեցությունը համաշխարհային արդի գործընթացների վրա:
- Ճանաչի Նոր դարերում հասարակական, քաղաքական և մշակութային կարևոր դերակատարում ունեցող անհատներին, գնահատի նրանց գործունեությունը և դերակատարումը
- Օրինակներ բերի Նոր դարերում համաշխարհային պատմության մեջ տեղ գտած հակամարտություններից և հեղափոխական գործընթացներից, գնահատի դրանց ազդեցությունը հետագա և արդի պատմական գործընթացների վրա:
- Մեկնաբանի պատմական կարևոր եզրույթներն ու հասկացությունները, և կիրառի դրանք ըստ անհրաժեշտության և նշանակության:
- Աղբյուրագիտական հենքով վերլուծի առկա տեղեկույթը, համադրի փաստերն ու իրադարձությունները և անի եզրակացություններ

Թեմայի բովանդակություն

Ջարգացած արդյունաբերական երկրները (XIX դարի երկրորդ կես-XX դարի սկիզբ)

- Արդյունաբերական հասարակության երկրորդ շրջափուլը. Փոփոխություններ տնտեսության մեջ և սոցիալական կյանքում
- Միջազգային հարաբերությունները (XIX դար – xx դարի սկիզբ)
- Ազգային պետությունների առաջացումը Բալկանյան թերակղզում

4. Ազգային հիմնախնդիրը բազմազգ տերություններում 5. Առաջին աշխարհամարտը 6. Ռուսական հեղափոխությունը	
Ուսումնական գործունեություն	Ընդհանրական խաչվող հասկացություններ
ուսումնական նյութի բացատրում Սկզբնաղյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն: Հետազոտական աշխատանք ուրվագծային քարտեզների հետ աշխատանք	Օրինաչափություն Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները դիտարկել որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ: Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայուն զարգացում Դիտարկել հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա:
Միջառարկայական կապերը թեմայում	
Աշխարհագրություն- քարտեզի կիրառում Գրականություն – համապատասխան տեքստերի ընթերցում ու վերլուծում ՆԶՊ- բանակի ու զենքի տեսակների ուսումնասիրում Արվեստ - փոփոխությունների արտացոլանքը արվեստում, նկարչություն, երաժշտություն	
Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնադյունքների հետ	
Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 34, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46	

Թեմա 2
Աշխարհը արդյունաբերական հասարակության երրորդ շրջափուլում
Նպատակ
Մանր կուսումնասիրի արդյունաբերական հասարակության երրորդ շրջափուլում տեղ գտած հասարակական, քաղաքական, տնտեսական և աշխարհաքաղաքական գործընթացները, դրանցում կարևոր դերակատարում ունեցող անհատներին:

Վերջնարդյունք

- նկարագրի համաշխարհային պատմության Նորագույն շրջանի Պատմական կարևոր իրադարձությունները, բացատրի դրանց դերակատարումը մարդկության զարգացման գործընթացում
- Քարտեզի վրա ցույց տա Նորագույն շրջանում հասարակական, քաղաքական, տնտեսական և աշխարհաքաղաքական գործընթացներով պայմանավորված փոփոխությունները:
- Նկարագրի Նորագույն շրջանի աշխարհի պետությունները, դրանց հասարակական, քաղաքական և տնտեսական կառուցվածքը, թվարկի դրանց առանձնահատկությունները:
- Նկարագրի Նորագույն շրջանի հասարակական քաղաքական և տնտեսական գործընթացները, մեկնաբանի դրանց նորարարական դերակատարումն ու աղեցությունը համաշխարհային արդի գործընթացների վրա:
- Ճանաչի Նորագույն շրջանի աշխարհի մշակույթները, համադրի դրանց առանձնահատկությունները, Յույց տա համաշխարհային մշակութային դաշտում դրանց փոխներգործությունը
- Ճանաչի Նորագույն շրջանում հասարակական, քաղաքական և մշակութային կարևոր դերակատարում ունեցող անհատներին, գնահատի նրանց գործունեությունը և դերակատարումը
- Օրինակներ բերի Նորագույն շրջանում համաշխարհային պատմության մեջ տեղ գտած հակամարտություններից և հեղափոխական գործընթացներից, գնահատի դրանց ազդեցությունը արդի պատմական գործընթացների վրա:
- Մեկնաբանի պատմական կարևոր եզրույթներն ու հասկացությունները, և կիրառի դրանք ըստ անհրաժեշտության և նշանակության:
- Աղբյուրագիտական հենքով վերլուծի առկա տեղեկույթը, համադրի փաստերն ու իրադարձությունները և անի եզրակացություններ

Թեմայի բովանդակություն

1. Նոր աշխարհակարգի ձևավորումը. Ազգերի լիգան
2. Ժողովրդավարական հասարակությունները 1920–ական թվականներին
3. Տնտեսական մեծ ճգնաժամը
4. Ամբողջատիրական վարչակարգերը 1920–ական թվականներին. Նացիզմ, ֆաշիզմ և սոցիալիզմ
5. Արևելքի ավանդական հասարակությունները 1920–1930–ական թթ.
6. Միջազգային հարաբերությունները 1920–1930–ական թվականներին
7. Երկրորդ աշխարհամարտը
8. Թեմայի ամփոփում

Ուսումնական գործունեություն

ուսումնական նյութի բացատրում
սահիկաշարերի ներկայացում
նշանավոր անձանց մասին

Ընդհանրական խաչվող հասկացություններ

Համակարգ
Դիտարկել պետությունը որպես հասարակության միասնական քաղաքական համակարգ:

տեղեկությունների հավաքագրում, գրավոր և բանավոր հաղորդումների պատրաստում Բանավեճ Դերախաղ Էքսկուրսիաներ	Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայուն զարգացում Դիտարկել հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա: Անհատական և մշակութային արտահայտում Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը
Միջառարկայական կապերը թեմայում	
Աշխարհագրություն – քաղաքական քարտեզի ուսումնասիրում Գրականություն – համապատասխան տեքստի ուսումնասիրում և մեկնաբանում ՆԶՊ - բանակի կառուցվածքի և զենքի տեսակների ուսումնասիրում Արվեստ -երաժշտություն, նկարչություն և այլն՝ կոնֆլիկտի պատկերումը արվեստում	
Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ	
Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 34, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46	

Թեմա 3
Աշխարհը սառը պատերազմի ժամանակաշրջանում
Նպատակ
Սանը կուսումնասիրի Սառը պատերազմի ընթացքում տեղ գտած հասարական, քաղաքական, տնտեսական, մշակութային գործընթացները ինչպես նաև դրանցում կարևոր դերակատարում ունեցած անհատներին:
Վերջնարդյունք
• նկարագրի համաշխարհային պատմության Նորագույն շրջանի Պատմական կարևոր իրադարձությունները, բացատրի դրանց դերակատարումը մարդկության զարգացման գործընթացում • Քարտեզի վրա ցույց տա Նորագույն շրջանում հասարակական, քաղաքական, տնտեսական և աշխարհաքաղաքական գործընթացներով պայմանավորված փոփոխությունները: • Նկարագրի Նորագույն շրջանի աշխարհի պետությունները, դրանց հասարակական, քաղաքական և տնտեսական կառուցվածքը, թվարկի դրանց առանձնահատկությունները: • Նկարագրի Նորագույն շրջանի հասարակական քաղաքական և տնտեսական

գործընթացները, մեկնաբանի դրանց նորարարական դերակատարումն ու ադեցությունը համաշխարհային արդի գործընթացների վրա: • Ծանաչի Նորագույն շրջանում հասարակական, քաղաքական և մշակութային կարևոր դերակատարում ունեցող անհատներին, գնահատի նրանց գործունեությունը և դերակատարումը • Օրինակներ բերի Նորագույն շրջանում համաշխարհային պատմության մեջ տեղ գտած հակամարտություններից և հեղափոխական գործընթացներից, գնահատի դրանց ազդեցությունը արդի պատմական գործընթացների վրա: • Մեկնաբանի պատմական կարևոր եզրույթներն ու հասկացությունները, և կիրառի դրանք ըստ անհրաժեշտության և նշանակության: • Աղբյուրագիտական հենքով վերլուծի առկա տեղեկույթը, համադրի փաստերն ու իրադարձությունները և անի եզրակացություններ
--

Թեմայի բովանդակություն

1. Սառը պատերազմ
2. Երկբևեռ աշխարհ. Կապիտալիզմ և սոցիալիզմ
3. Սառը պատերազմի <<տաք դրսևորումները>>
4. Ժողովրդավարություն տանող շարժումները
5. Երրորդ աշխարհի երկրները
6. Թեմայի ամփոփում

Ուսումնական գործունեություն	Ընդհանրական խաչվող հասկացություններ
նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքագրում, գրավոր և բանավոր հաղորդումների պատրաստում Բանավեճ Սկզբնաղյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն: ֆիլմերի դիտում և քննարկում	Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայուն զարգացում Դիտարկել հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա: Գիտատեխնիկական նորարարություն Դիտարկել գիտական և տեխնոլոգիական նվաճումների ու քաղաքակրթական ձեռքբերումների ազդեցությունը կյանքի, հասարարական զարգացման և առաջընթացի վրա:

Միջառարկայական կապերը թեմայում

Աշխարհագրություն- քաղաքական քարտեզի փոփոխություն
Հասարակագիտություն – համակարգերի, կոնֆլիկտի, գաղափարախոսություն ուսումնասիրում
Գրականություն – համապատասխան տեքստերի ընթերցում և մեկնաբանում
ՆԶՊ- զենքի ու բանակի կառուցվածքի ուսումնասիրում
Արվեստ - կոնֆլիկտի արտացոլանքը արվեստում

Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ

Հ 10, Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 34, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46

Թեմա 4

Աշխարհը սառը պատերազմից հետո

Նպատակ

Սանը կուսումնասիրի հետսառպատերազմյան ժամանակաշրջանում տեղ գտած հասարական, քաղաքական, տնտեսական, մշակութային գործընթացները ինչպես նաև դրանցում կարևոր դերակատարում ունեցած անհատներին:

Վերջնարդյունք

- նկարագրի համաշխարհային պատմության Նորագույն շրջանի Պատմական կարևոր իրադարձությունները, բացատրի դրանց դերակատարումը մարդկության զարգացման գործընթացում
- Քարտեզի վրա ցույց տա Նորագույն շրջանում հասարակական, քաղաքական, տնտեսական և աշխարհաքաղաքական գործընթացներով պայմանավորված փոփոխությունները:
- Նկարագրի Նորագույն շրջանի աշխարհի պետությունները, դրանց հասարակական, քաղաքական և տնտեսական կառուցվածքը, թվարկի դրանց առանձնահատկությունները:
- Նկարագրի Նորագույն շրջանի հասարակական քաղաքական և տնտեսական գործընթացները, մեկնաբանի դրանց նորարարական դերակատարումն ու ադեցությունը համաշխարհային արդի գործընթացների վրա:
- Ճանաչի Նորագույն շրջանում հասարակական, քաղաքական և մշակութային կարևոր դերակատարում ունեցող անհատներին, գնահատի նրանց գործունեությունը և դերակատարումը
- Օրինակներ բերի Նորագույն շրջանում համաշխարհային պատմության մեջ տեղ գտած հակամարտություններից և հեղափոխական գործընթացներից, գնահատի դրանց ազդեցությունը արդի պատմական գործընթացների վրա:
- Մեկնաբանի պատմական կարևոր եզրույթներն ու հասկացությունները, և կիրառի դրանք ըստ անհրաժեշտության և նշանակության:
- Աղբյուրագիտական հենքով վերլուծի առկա տեղեկույթը, համադրի փաստերն ու իրադարձությունները և անի եզրակացություններ

Թեմայի բովանդակություն

1. Արևմուտքի երկրները հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում 2. Հետխորհրդային երկրները 3. Փոփոխություններ միջազգային հարաբերություններում 4. Արդի աշխարհի հիմնախնդիրները 5. Թեմայի ամփոփում	
Ուսումնական գործունեություն	Ընդհանրական խաչվող հասկացություններ
սահիկաշարերի ներկայացում Զանգվածային լրատվամիջոցներից , համացանցից ստացված տեղեկատվության վերլուծություն: հիմնախնդիրների հետազոտում Հետազոտական աշխատանք	Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայուն զարգացում Դիտարկել հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա: Գիտատեխնիկական նորարարություն Դիտարկել գիտական և տեխնոլոգիական նվաճումների ու քաղաքակրթական ձեռքբերումների ազդեցությունը կյանքի, հասարակական զարգացման և առաջընթացի վրա:
Միջառարկայական կապերը թեմայում	
Աշխարհագրություն - քաղաքական քարտեզ Հասարակագիտություն – քաղաքական, տնտեսական, կրոնական համակարգեր Գրականություն – համապատասխան տեքստի ընթերցում ու մեկնաբանում Արվեստ - նկարչություն, երաժշտություն, կյանքի արտացոլանքը արվեստում,	
Կապը Հանրակրթության չափորոշի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ	
Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 23, Հ 25, Հ 26, Հ 27, Հ 32, Հ 33, Հ 34, Հ 35, Հ 36, Հ 45,Հ 46	

Թեմա 5
Գիտատեխնիկական հեղափոխությունը և աշխարհը
Նպատակ
